ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.04.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/112

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.03.2022թ. թիվ 26/26-1/5007-2022 գրությամբ «Էներգոտրաստ» ԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 18.03.2022թ. թիվ Ե/40/609-22 գրության հիման վրա, 24.03.2022թ. թիվ 26/26-1/5007-2022 գրությամբ նախաձեռնել է «Էներգոտրաստ» ԲԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Էներգոտրաստ» ԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Էներգոտրաստ» ԲԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Էներգոտրաստ» ԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/112 ընթացակարգի շրջանակներում 29.03.2022թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.03.2022թ. թիվ Ե/40/609-22 գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար սողնակների և փականների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-37/22» ծածկագրով գնման ընթացակարգի աճուրդի ամփոփման, հայտերի գնահատման նիստում արձանագրվել է, որ «Էներգոտրաստ» ԲԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են եղել անհամապատասխանություններ: ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել է և նույն օրը համակարգող քարտուղարը էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով առկա անհամապատասխանությունների վերաբերյալ ծանուցել է մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում կատարել շտկում: Շտկման արդյունքում «Էներգոտրաստ» ԲԸ-ի կողմից ներկայացված հայտը թիվ 5 չափաբաժնի մասով գնահատվել է հրավերի պահանջներին անհամապատասխան՝ անբավարար և մերժվել է:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա) պարբերության և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N526-Ն որոշման 45-րդ կետի պահանջներով՝ Ձեզ ենք ներկայացնում մասնակցի տվյալները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/112 ընթացակարգի շրջանակներում 29.03.2022թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/112 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/112 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար սողնակների և փականների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-37/22» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Էներգոտրաստ» ԲԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է հետևյալը.

«Թիվ 3, 5 չափաբաժիններում առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում նշված էին «կամ համարժեք»-ներ, որոնցից պարզ չէր թե ինչ ապրանքներ են առաջարկվում:

Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում անհրաժեշտ էր լրացնել կազմակերպության բոլոր իրական շահառուների տվյալները»:

3. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 41-րդ կետի՝ որոշվել էր կասեցնել հայտերի գնահատման նիստը և «Էներգոտրաստ» ԲԸ-ին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները, որոնց վերաբերյալ գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով ծանուցել է նրան: Ընկերությունը համակարգում առկա խնդրի պատճառով հնարավորություն չի ունեցել սահմանված ժամկետում համակարգի միջոցով շտկում կատարելու և շտկման ենթակա փաստաթղթերը, ուղեկցող գրությամբ, ուղարկել է համակարգող քարտուղարի էլ. փոստին, որոնք ընդունվել են գնահատող հանձնաժողովի կողմից, սակայն թիվ 5 չափաբաժնի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանել հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին, քանի որ «Էներգոտրաստ» ԲԸ-ի կողմից առաջարկվող սողնակը ՀԱԷԿ-ի պայմաններում չվերանորոգվող է և պահանջվելու է նախագծի մեջ էլեմենտի փոփոխություն և որոշում կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.03.2022թ. թիվ 26/26-1/5007-2022 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 18.03.2022թ. թիվ Ε/40/609-22 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված***

պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***<u>եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.11 ենթակետի համաձայն՝ ***<u>առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում</u>***, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***<u>հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող</u>***

<u>ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:</u>

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը <u>համակարգի միջոցով</u> շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Այսպես, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար սողնակների և փականների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-37/22» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Էներգոտրաստ» ԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է հետևյալը.

«Թիվ 3, 5 չափաբաժիններում առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում նշված էին «կամ համարժեք»-ներ, որոնցից պարզ չէր թե ինչ ապրանքներ են առաջարկվում:

Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում անհրաժեշտ էր լրացնել կազմակերպության բոլոր իրական շահառուների տվյալները»:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 41-րդ կետի՝ որոշվել էր կասեցնել հայտերի գնահատման նիստը և «Էներգոտրաստ» ԲԸ-ին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները, որոնց վերաբերյալ գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով ծանուցել է նրան: Ընկերությունը համակարգում առկա խնդրի պատճառով հնարավորություն չի ունեցել սահմանված ժամկետում համակարգի միջոցով շտկում կատարելու և շտկման ենթակա փաստաթղթերը, ուղեկցող գրությամբ, ուղարկել է համակարգող քարտուղարի էլ. փոստին, որոնք ընդունվել են գնահատող հանձնաժողովի

կողմից, սակայն թիվ 5 չափաբաժնի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանել հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին, քանի որ «Էներգոտրաստ» ԲԸ-ի կողմից առաջարկվող սողնակը ՀԱԷԿ-ի պայմաններում չվերանորոգվող է և պահանջվելու է նախագծի մեջ էլեմենտի փոփոխություն և որոշում կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.11 ենթակետի համաձայն՝ ***առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում***, ***հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:***

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում:

Մինչդեռ՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Էներգոտրաստ» ԲԸ-ին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները, որոնց վերաբերյալ գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանը, սակայն Ընկերությունը համակարգում առկա խնդրի պատճառով հնարավորություն չի ունեցել սահմանված ժամկետում համակարգի միջոցով շտկում կատարելու և շտկման ենթակա փաստաթղթերը, ուղեկցող գրությամբ, ուղարկել է համակարգող քարտուղարի էլ. փոստին, որոնք ընդունվել են գնահատող հանձնաժողովի կողմից, սակայն թիվ 5 չափաբաժնի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանել հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին:

Պատվիրատուի կողմից տրամադրված Ընթացակարգին առնչվող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում, հարկ եմ համարում արձանագրել, որ նախևառաջ առկա չէ Ընկերությանն ուղարկված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումը, որով հնարավոր կլիներ պարզել երբ է այն ուղարկվել Ընկերությանը, արդյո՞ք

Ընկերությանն ուղարկված ծանուցման մեջ մանրամասն նկարագրվել են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները, ինչպես նաև հնարավոր չէ պարզել արդյո՞ք Ընկերության կողմից շտկված փաստաթղթերը ներկայացվել են սահմանված ժամկետում թե՞ ոչ:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ Պատվիրատուի կողմից որևէ կերպ չի հիմնավորվել նշված ժամանակահատվածում համակարգի խափանված լինելու հանգամանքը և վիճելի է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության շտկված փաստաթղթերը համակարգող քարտուղարի էլ. փոստին ուղարկված լինելու պայմաններում դրանք ընդունելու իրավաչափության հարցը, քանի որ Ընթացակարգի հրավերով հստակ սահմանված է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցն արձանագրված անհամապատասխանությունը շտկում է համակարգի միջոցով:

Նման պայմաններում գտնում եմ, որ հնարավոր չէ Ընկերության կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվության խախտման փաստը, ինչն էլ իր հերթին կհանգեցներ «Էներգոտրաստ» ԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.03.2022թ. թիվ 26/26-1/5007-2022 գրությամբ «Էներգոտրաստ» ԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**